15856

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 12 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0195-22

Ձեռնարկողը՝ ***«ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ***
ք. Երևան Բայրոնի փողոց/4շ/ բն. 4 Նորք-Մարաշ

Գործունեությունը՝ ***Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ №0195-22

«16» 12 2022թ

Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզ, Արտաշար համայնք

Ներածական մաս. Արմավիրի մարզի Ապագայի ավազաի և կոպճագլաքարի հանքավայրի տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Արմավիրի մարզի Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի բացահանքի նախագիծը կատարվել է «ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի «գ» ենթակետի՝ Արմավիրի մարզի Ապագայի ավազի և կապճագլաքարային խառնուրդի արդյունահանմուը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի 23.04.1971թ թիվ 202 արձանագրությամբ:

Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի շահագործման նախագիծը նախագծվել է տարեկան ԱԿԳԽ-ի 100000մ^3 զանգվածի արտադրողականությամբ:

Նկարագրական մաս. Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրը պատկանում է Արաքս գետի հին հունին և գտնվում է Արմավիրի մարզում, Ապագա և Արտաշար գյուղերի միջև:

Վարչատարածքային բաժանման տեսակետից հանքավայրի տարածքը ներառված է Արմավիրի մարզի սահմաններում, տեղակայված է Մեծամոր խոշորացված համայնքի Արտաշար բնակավայրի վարչական սահմաններում: Մոտակա բնակավայրերն են նաև Գրիբոյեդով, Առատաշեն, Լուսագյուղ և Ակնաշեն գյուղերը:

Արտաշար գյուղի մոտակա բնակելի տարածքները գտնվում են հայցվող տարածքից 870մ, Գրիբոյեդով գյուղի բնակելի տարածքները՝ 1340մ, Առատաշեն գյուղի բնակլելի տարածքները՝ 1810մ հեռավորությունների վրա:

Երկրաձաբանական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Արարատյան դաշտի արևմտյան մասում:

Ապագայի ավազի և կոպճային խառնուրդի հանքավայրի տարածքը ծագումնաբանորեն կապված է Սև ջուր (Մեծամոր) գետի հիդրոլոգիական գործունեության արգասիքների հետ, հանքավայրի շրջանի ավազակոպճային և կոպճագլաքարային առաջացումների հետ կապված է գրունտային ջրերի հորիզոն, ավազակոպճային կուտակները ջրակալված են: Սողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել:

Ապագայի հանքավայրի տարածքում չեն դիտարկվել ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակները:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում, այդ թվում նաև Արտաշար բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Հայցվող տեղամասը գտնվում է 840-843մմ բացարձակ բարձությունների վրա:

Հանքավայրի 31.98հա տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի).

1. Y=8431761.0000 X=4442758.0000	9. Y=8431294.0000 X=4442767.0000
2. Y=8431594.0000 X=4442679.0000	10.Y=8431375.0000 X=4442698.0000
3. Y=8431554.0000 X=4442708.0000	11. Y=8431842.0000 X=4442416.0000
4. Y=8431702.5214 X=4442904.6221	12. Y=8431959.0000 X=4442154.0000
5. Y=8431730.0000 X=4442941.0000	13. Y=8432136.0000 X=4442140.0000
6. Y=8431692.0000 X=4442955.0000	14. Y=8432209.2138 X=4442436.1093
7. Y=8431614.0000 X=4443021.0000	15. Y=8431976.4170 X=4442703.1268
8. Y=8431412.9089 X=4443036.4699	1. Y=8431761.0000 X=4442758.0000

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքարդյունահանման աշխատանքների կատարում աշխատանքների սեզոնային ռեժիմով,
- հանքարդյունահանման աշխատանքները կատարում պաշարների եզրագծված սահմաններում,
- հանույթաբարձման աշխատանքները կատարում հակառակ բահով սարքավորված էքսկավատորով:

Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի շահագործման նախագիծը նախագծվել է տարեկան ԱԿԳԽ-ի 100000մ^3 զանգվածի արտադրողականությամբ, շահագործումը նախատեսվում է իրականացնել հակառակ բահ միաշերեփ էքսկավատոր միջոցով, ուրջտարյա ռեժիմով:

Օգտակար հանածոն ներկայացված է ավազի և կոպճագլաքարային խառնուրդով, որի միջինը հզորությունը կազմում է 5.64մ, ԱԿԳԽ տեղափոխումը նախատեսվել է իրականացնել սպառողի տրանսպորտային միջոցներով:

Հանքավայրի կտրվածքը վերևից ներքև ներկայացված է՝ ժամանակակից բերվածքային ապարներ, որոնք ունեն լայն տարածում և զբաղեցնում են զգալի մակերեսներ: Վերջիններս ներկայացված են հողաբուսական ապարներով, կավավազներով և ավազակավային խառնուրդներով, հզորությունը կազմում է 4մ, վերին չորրորդականի գոյացումներ, որոնք ներկայացված են ավազներով և գլաքարերով, ավազներն ունեն 0.2-2մմ մեծություն, իսկ գլաքարերը՝ 8-10մմ մեծություն, հիմնատակող ապարներ, որոնք ներկայացված են շագանակագույն կավերով և գլաքարերով, հզորությունը կազմում է 6-7մ:

Օգտակար հանածոյի որակական և տեխնոլոգիական բնութագիրը հետևյալն է.

1. ծավալային կշիռը – 1140կգ/մ3-1757կգ/մ^3;
2. կավային մասնիկների պարունակությունը – 1.6-3.45%,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ЕРЕВАН ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

3. տեսակարար կշիռը – 2.6մ-2.86գ/մ^3,
4. խոշորության մոդուլը – 1.35-3.64մ.կ

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները և հատկապես ծածկող շերտի ոչ մեծ ծավալը, օգտակար հանածոյի փոքր հզորությունը հնարավորություն են տալիս ընդունել մշակման բաց եղանակ, ընդունված է համատարած մեկ աստիճանով համակարգ, աստիճանի բարձրությունը ըստ հանքաշերտի հզորության:

Ելնելով հանքավայրի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են բացահանքի հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 1115մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 400մ,
- բացահանքի ընդհանուր մակերեսը մակերևույթի վրա - 319800մ^2,
- ավազակոպճագլաքարային խառնուրդի միջին հզորությունը – 5.8մ,
- մարվող պաշարները – 1850200մ^3,
- արդյունահանվող պաշարները – 1743000մ^3,
- մակաբացման ապարների ծավալը կազմում է 414700մ^3,
- մակաբացման գործակիցը 0.238մ^3/մ^3:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 17.43 տարի:

Տարեկան մարվող պաշարները կազմում են 106150մ^3, իսկ արդյունահանվող պաշարները՝ 100000մ^3 ԱԿԳԽ զանգված:

Բացահանքի բացումը կատարվելու է բացահանքի հյուսիսային մասով անցնող ճանապարհից մոտեցող գրունտային ճանապարհի անցումով 850մ երկարությամբ և12մ լայնությամբ: Բացահանքի հարավ-արևելյան մասում անցկացվելու է կտրող խրամ(առաջնային ճակատի ստեղծում): Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2մ, միջին խորությունը 5.8մ:

Մակաբացման ապարները բացահանքի եզրագծում կազմելու են 414700մ^3, որի տարեկան և հերթափոխային ծավալները կազմելու են համապատասխանաբար 23800մ^3 և 91.54մ^3: Շահագործման առաջին տարվա ընթացքում մակաբացման ապարները տեղադրվելու են բացահանքի սահմաններում, որից հետո ձևավորվելու է ներքին լցակույտաառաջացում:

Բացահանքի մակաբացման ապարները ներկայացված են ալյուվիալ առաջացումներով:

Արտաքին լցակույտի միջին բարձրությունը կազմելու է 3.5մ: Կողի թեքման անկյունը 33°: Բուլդոզերի միջոցով մակաբացման ապարները կտեղափոխվեն 25-30մ հեռավորության վրա և կկուտակվեն, որից հետո էքսկավատորի միջոցով կբարձվեն ավտոինքնաթափը և կտեղափոխվեն ներքին լցակույտ: Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 59300մ^2, լցակույտառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանականով:

Հանքի շինարարության ժամանակ լեռնակապիտալ աշխատանքներին վերագրվում են՝բացող խրամի (ավտոճանապարհի) անցկացում, որը ունի L=850մ երկարություն և 12մ լայնություն - Vա=510մ^3, արդյունաբերական հրապարակի կառուցում Sա=600մ^2 մակերեսով և 120մ^3 ծավալով, մակաբացման ապարների հեռացում – 270մ^3, կտրող խրամի անցում (առաջնային ճակատի ստեղծում) - 1200մ^3:

Ընդունված մշակման համակարգը կունենա հետևյալ պարամետրերը՝ աստիճանի բարձրությունը միջինը – 5.8մ, աշխատանքային աստիճանի թեքության անկյունը – 45°, ընթացքի լայնությունը -8.0մ, աշխատանքային անվտանգ գոտու շառավիղը -15մ:

Քանի որ, հաստաշերտերի հզորությունը փոքր է, արդյունահանման աշխատանքները կատարվելու են տեղում առկա CAT 336-07C մակնիշի 1.65մ^3 շերեփի տարողությամբ հակառակ բահ էքսկավատորով ներքևից շերեփումով: Կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղին)՝

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

Մակաբացման ապարները 91.54մ³/հերթ.ծավալով կբարձվեն ընկերությունում առկա SHACMAN3256DR384 մակնիշի ավտոինքնաթափը և կտեղափոխվեն ներքին լցակույտ միջինը 500մ հեռավորության վրա:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը և մուտքային ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Տեխնիկական ջրամատակարարումը իրականացվում է SHAANXI SX 3257DR384 մակնիշի ավտոմեքենայի վրա հարմարեցված ցիստեռնով, իսկ խմելու ջրի մատակարարումը կկատարվի ջրի կցիչ ցիստեռնով կամ շշալցված տարբերակով:

Հանքավայրի ճանապարհատրանսպորտային պայմանները բարենպաստ են:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Ապագայի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում հնարավոր են շրջակա միջավայրի վրա տեխնածին ճնշումներ որոնցից են.

1. Բացահանքից մթնոլորտ արտանետում փոշի և գազեր: Դրանց աղբյուրներն են հանդիսանում (ըստ նախագծի)՝ բացահանքը, տրանսպորտը և լցակույտը:
2. Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝
- անօրգանական փոշի (բուլդոզերային աշպատանքներ, տրանսպորտի աշխատանք, լցակույտ),
- ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ (դիզելային և բենզինային վառելիքով աշխատող մեքենաներից):

Բացահանքում օգտակար հանածոյի արդյունահանումն իրականացվում է խոնավ միջավայրում, որի հետևանքով փոշի չի գոյանալու:

Վնասակար գազային արտանետումները, որոնք առաջանում են դիզ.վառելիքով աշխատող բուլդոզերից, ավտոինքնաթափից և էքսկավատորից կազմելու են համապատասխանաբար 3.5գ/վրկ, 3.24գ/վրկ և 3.1գ/վրկ:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ, հաշվարկը կատարվել է «ԷՌԱ» համակարգչային ծրագրով և ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Արդյունահանված տարածքները կլցվեն գրունտային ջրերով և կվերածվեն ջրային ավազանի:

Բուսական և կենդանական աշխարհ՝ տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա ավազի և կոպճագլաքարային խառնուրդի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը պայմանավորված կլինի օտարման տարածքում հողաբուսական շերտի խախտման, լանդշաֆտային փոփոխության և կենդանական աշխարհի համար անհագստացնող գործոն հանդիսացող աղմուկի և թրթռումների հետ:

Շահագործման փուլում առաջացող թափոնները կներառեն.

- բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած փխրուն մակաբացման ապարներ՝ 34000120 01 99 5 ծածկագրով, իսկ կավային ապարներ՝ 34000130 01 99 5 ծածկագրով, դասվում են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են,
- բանեցված դիզելային յուղեր ծածկագիրը՝ 54100203 02 03 3: կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%,ջուր 3.2%:

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում,

- բանեցված շարժիչների յուղեր՝ ծածկագիրը՝ 54100201 02 03 3, կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%:

Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում,

- բանեցված դողածածկեր՝ ծածկագիրը՝ 57500200 13 00 4, կազմը՝ բութադիենային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%:

Հանքավայրում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում,

- չտեսակավորված կենցաղային աղբ տարեկան մոտ 13տ ծավալով, ծածկագիրը՝91200400 01 00 4, կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ:

Թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կարող են հանդիսանալ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, ժամանակավոր լցակույտերի ձևավորումը, ճանապարհներին տրնասպորտի տեղաշարժը: Նախատեսվում է աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն, համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի(ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 85դԲԱ:

Շրջակա միջավայրի վրա ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 526974.9 դրամ/տարի:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տեղամասի տարածքում նավթամթերքների, բանեցված յուղերի, քսայուղերի կուտակման/պահեստավորման բացառում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- աշխատանքային հրապարակի ջրամատակարարում՝ աշխատողների խմելու և կենցաղային նպատակով,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով, արտաքնոցի հորում կուտակված նյութի պարբերական տրոհում կենսաակտիվ մանրէաբանական նյութերի կիրառմամբ և այլն:

Շահագործման ավարտից հետո նախատեսվում է լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի ենթարկել ներքին լցակույտի մակերեսը 5.93հա և արտադրական հրապարակը 0.06հա, ընդամենը՝ 5.99հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է նաև տարածքի կենսաբանական ռեկուլտիվացիա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի աշխատանքներից հետո, հարթեցված մակերևույթին փռված հողերը կպարարտացվեն բնական

պարարտանյութերի կիրառմամբ, ապա կկատարվի բազմամյա, ջրասեր բույսերի սածիլների տնկում: Աշխատանքները կատարվելու են բուսաբան-մասնագետի կողմից, ով իրականացնելու է սերմերի և սաշիլների ընտրության, նախապատրաստման աշխատանքներ՝ մշակում բակտերիալ պարարտանյութերով, միկրոտարրերով, լոբազգիների դեպքում՝ թրջում և ծլեցում, այնուհետև սերմերի ցանք և հսկողություն, մակերեսի շուրջ 40% համար՝ կրկնակից ցանք (հաշվի առնելով ծլման ցուցանիշները):

Ռեկուլտիվացիոն աշխատանքների լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերի իրականացման համար անհրաժեշտ գումարը կկազմի 2202.240հազ.դրամ:

Բացի վերը նշյալ բնապահպանական միջոցառումներից նախատեսվում են նաև մի շարք այլ միջոցառուներ, որոնք վերաբերվում են կենսաբազմազանության պահպանության, փակման աշխատանքների, հակավթարային միջոցառումներին, աշխատակիցների հրահանգավոմանը, արտակարգ իրավիճակներին և այլն, որոնք մրագրված և նկարագրված են գնահատման հաշվետվությունում և բնապահպանական կառավարման միջոցառումների պլանում:

Բնապահպանական միջոցառումների կատարման համար ընկերության տարեկան շահագործական ծախսերում կնախատեսվի 1230.0հազ.դրամ:

Ապագայի ավազի և կոպճագլաքային խառնուրդի հանքավայրի շահագործման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. արտադրական հրապարակի տարածքի մշտադիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածության ուսումնասիրության նպատակով,
3. լցակույտի մակերեսի նմուշարկում՝ հումուսի պարունակությունտ որոշելու համար,
4. հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,
5. աղմուկի մակարդակի վերահսկողություն:

Տարեկան կտրածքով մշտադիտարկումների իրականացման համար հատկացվելու է մոտ 815.0հազ.դրամ:

Նախատեսված է նաև հանքի փակման ծրագրի, որի կազմման հիմնական նպատակը օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում խախտված/վտանգված շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային և ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, բուսական և կենդանական աշխարհ) վերականգնումն ու հետագա մոնիտորինգի իրականացումն է: Ծրագիրը պարբերաբար թարմացվելու է՝ արտացոլելով բացահանքի աշխատանքային փուլերում շահագործման կամ շրջակա միջավայրի փոփոխությունները, իսկ շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ մշակվելու է հանքի փակման ծրագրի վերջնական տարբերակը:

Պատճառաբանական մաս. Նախատեղվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Արմավիրի մարզի Արտաշար համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության կողմից նախատեսվող գործունեության իրականացումը արժանացել է հավանություն:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Առողջապահության, Կրթության, գիտության, սպորտի, մշակույթի,

սպորտի և Արտակարգ իրավիճակների նախարարությունները, Կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը:

Պետք է փաստել, որ ՇՄԱԳ հաշվետվությունում շրջակա միջավայրի պահապանության, ինչպես նաև սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել է բավարար միջոցառումների ծրագիր:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումներ ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հաշվետվությունում, նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական նորմերը, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի Ընդերքօգտագործման հատևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
5. Արդյունահանման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 20 հունվարի 2005 թվականի N 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին որոշման պահանջներով»:
6. Առաջնորդվել 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» 342-Ն հրամանի որոշմամբ:
7. Անհրաժեշտ է տեխնիկական և կենցաղային ջուր օգտագործելու համար օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույտվություն:

8. Մինչ աշխատանքների սկսելը անհարժեշտ է կատարել հողի նպատակային, գործառնական նշանակության փոփոխություններ:
9. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:
Հաշվետվությունում առկա առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՍ ԹԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ապագայի ավազի և կոպճագլաքարային հանքավայրի աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան